Արձանագրություն N 4

«Երևանի Ջերմաէլեկտրակենտրոն» ՓԲԸ-ի կողմից կազմակերպված
«ԵՐՋԷԿ-ԳՀԾՁԲ [illegible]1/17» ծածկագրով ընթացակարգի գնահատող
հանձնաժողովի հայտերի բացման նիստի վերսկսման

ք. Երևան | 04.09.2017թ.
ժ. 15:00-ին

Մասնակցում էին

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Գևորգյանը |
| Հանձնաժողովի անդամներ՝ | Ս. Չիդեմյանը |
| | Ա. Վարդապետյանը |
| | Լ. Օհանյանը |
| Հանձնաժողովի քարտուղար | Ա. Պետրոսյանը |

<u>Նիստի օրակարգը</u>

1. Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:
2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը:
3. Տվյալներ՝ առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ.
4. Տեղեկատվություն՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.
5. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը:

***1.Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին:***

1.1 Հանձնաժողովը որոշեց՝ «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ի և «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ-ի հայտերը գնահատել բավարար:

1.2 Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Արմստրոյ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում շտկել է Հանձնաժողովի կողմից արձանագրված անհամապատասխանությունը, այն է՝ ներկայացրել է հրավերով պահանջվող որակավորման չափանիշների պահանջներին բավարարելու մասին հայտարարություն ՀԱՎԵԼՎԱԾ 3-ը և լիցենզիաները, ուստի հանձնաժողովը որոշեց, վերջինիս ներկայացրած հայտը գնահատել բավարար:

1.3 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետը, Ընթացակարգի Հրավերի 8.2 և 8.9 կետերը՝ հանձնաժողովը որոշեց «Կոմունալնախագիծ ինստիտուտ» ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել, քանի որ վերջինիս կողմից չի ներկայացվել Ընթացակարգի հրավերի Հավելված N 8 տուժանքի մասին համաձայնագրին կից վճարման պահանջագիրը:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

***2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը:***

2.1

| Հ/հ | Մասնակցի անվանումը | Արժեքը (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) /տառերով և թվերով/ | ԱԱՀ** /տառերով և թվերով/ | Ընդհանուր գինը /տառերով և թվերով/ |
|---|---|---|---|---|
| 1 | «Արմստրոյ» ՍՊԸ | 2 400 000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) | ------- | 2 400 000 (երկու միլիոն չորս հարյուր հազար) |
| 2 | «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ | 2 450 000 (երկու միլիոն չորս հարյուր հիսուն հազար) | -------- | 2 450 000 (երկու միլիոն չորս հարյուր հիսուն հազար) |
| 3 | «Նոմունախագիծ ինստիտուտ» ՍՊԸ | 2 800 000 (երկու միլիոն ութ հարյուր հազար) | -------- | 2 800 000 (երկու միլիոն ութ հարյուր հազար) |
| 4 | «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ | 3 420 000 (**երեք միլիոն չորս հարյուր քսան**) | ------ | 3 420 000 (**երեք միլիոն չորս հարյուր քսան**) |

2.2 Քանի որ «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած գնային առաջարկում առկա է անհամապատասխանություն տառերով և թվերով գրված գումարների միջև, ուստի Հանձնաժողովը ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 4-րդ մասով հիմք է ընդունել տառերով գրված գումարը՝ **երեք միլիոն չորս հարյուր քսան** ՀՀ դրամը:

***3. Բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով Ընթացակարգի առաջին և հաջորդաբար այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ***

Հաշվի առնելով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները, Հանձնաժողովը որոշեց՝

- «Արմստրոյ» ՍՊԸ-ին ճանաչել որպես առաջին տեղ զբաղեցրած մասնակից:
- «Սարգիս և Մարիաննա» ՍՊԸ-ին և «Թ.Ա.Հ.Գ. Գրիգ» ՍՊԸ-ին ճանաչել համապատասխանաբար Ընթացակարգի երկրորդ և երրորդ տեղեր զբաղեցրած մասնակիցներ:
- Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017թ-ի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետով որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղն զբաղեցրած մասնակից «Արմստրոյ» ՍՊԸ-ի

հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

***4. Տեղեկատվություն հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.***

- Մասնակիցների հայտերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել:

***5. Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրի, օրվա և ժամի մասին***

- Հանձնաժողովը որոշեց հաջորդ նիստը նշանակել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի վերաբերյալ եզրակացությունը ստանալուն հաջորդող երկրորդ աշխատանքային օրը, ժամը 11:00-ին, ք. Երևան Արին Բերդի 3-րդ նրբանցք, թիվ 3 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Հանձնաժողովի

Նախագահ — Ա. Գևորգյան

Անդամներ՝ — Ս. Չիդեմյան

Ա. Վարդապետյան

Լ. Օհանյան

Քարտուղար՝ — Ա. Պետրոսյան